



ԵՐԿՐԻՆԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐ, 2014

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 82

### ԱՍՏՈՒԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ

Աստուած կանգնած իր երկնային ատեանին մէջ,  
դատի կ'ենթարկէ դատաւորները.-  
«Դուք մինչեւ ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք,  
աչառութիւն պիտի ընէք ամբարիշտներուն:  
Տկարներուն ու որբերուն իրաւունքը պաշտպանեցէք,  
արդարութիւն ըրէք տառապեալին ու կարօտեալին:  
Ազատեցէք տկարն ու չքաւորը,  
փրկեցէք զանոնք ամբարիշտներուն ձեռքէն:  
Բայց ո՛չ գիտէք, ոչ ալ կը հասկնաք.  
դուք խաւարին մէջ կը խարխափիք,  
եւ ձեզի հետ աշխարհը կործանումի կը տանիք»:  
Եկուր, ով Աստուած, եւ դուն դատէ աշխարհը,  
որովհետեւ բոլոր ազգերը քեզի կը պատկանին:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ԱՐԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



# ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ



ԵԼԻՅ ԺԲ ԳԼՈՒԽ



## ԶԱՏԻԿԸ (12:1-14)

«Այս ամիսը ձեզի ամիսներուն սկիզբը ըլլայ: Զեզի փարուան ամիսներուն առաջինն ըլլայ» (2 հմր): Ընդհանրապէս ծանօթ երեւոյթ է հին ժողովուրդներու պարստութեան մէջ, թէ ինչպէս կը ճշդէին ամիսներ հասկացողութիւնը: Ընդհանրապէս երկու փետակի հաշուարկ կարելի է նկատի ունենալ քաղաքական թուական եւ կրօնական թուական: Այսինքն այն անկիւնադարձը կամ նշանաւոր այն դէպքը որո՞ւ պարճառով սկիզբ կը դրուէր փուսել ժողովուրդի կեանքին մէջ թուականի սկզբնաւորութիւնը: Ահա նոյն ձեւով Իսրայէլի ժողովուրդի կեանքին մէջ եւս իրենց Եգիպտոսէն ելքը անկիւնադարձ մը պիտի ըլլար, որով պիտի ճշդուէր ու յիշատակուէր այդ թուականը որպէս ամիսներու սկիզբ եւ փարուան ամիսներուն առաջինը: Հեղափոխականօրէն, այդ ամիսը ապրիլ ամիսն էր, որ նաեւ գարնան ամիսը, նոր կեանքի ամիսը, ու մանաւանդ փակաւին յառաջիկային յարութեան ամիսը:

«Գառնուկ մը առնէ, անարափ, արու, մէկ փարեկան ըլլայ» (5 հմր): Աստուծոյ ընծայուելիք գոհը պէտք է ըլլայ անարափ, որ կը նշանակէ ֆիզիքական անթերի, ոչ հիւանդ: Արու: Աստուծաճաշունջը մարտանը ոչ մէկ խարոյթիւն կը դնէ եզի եւ արուի միջեւ, որովհետեւ երկուքն ալ Աստուծոյ պարկերով սրեղծուեցան: Սակայն, մեղանչելէ ետք, փետակ մը խախտում փեղի ունեցաւ: Միւս կողմէ նաեւ, արուն ճանչցուած է աւելի զօրաւոր: Եւ իբրեւ պարաստութիւն եւ խորհրդանշում պիտի կապուի ճշմարիտ Գառնուկին՝ Յիսուս Քրիստոսին, որ մարմնապէս արուին սեռին կը պարկանէր: Իսկ գալով փարիքին, որեւէ կենդանի Աստուծոյ ընծայուելու համար պէտք էր անոր ծնունդէն 8 օրեր յետոյ ընծայուէր եւ մինչեւ մէկ փարեկան, ան կը նկատուէր մէկ փարեկան:

«Մինչեւ այս ամսուան 14-րդ օրը պահէք, ապա մորթեն իրիկուան դէմ, երկու իրիկուններուն մէջքերը» (6 հմր): Կը նշանակէ կենդանին եթէ 10-րդ օրը առին ուրեմն 4 օրեր պահելու, եւ ապա մորթելու իրիկուան դէմ, եւ կամ երկու իրիկուններուն միջեւ, այսինքն՝ կէսօրէ ետք ժամը 3-էն մինչեւ 6-ի միջեւ: 14-ը հեղափոխական համեմատութիւն մը կարելի է ընել 1400 փարուան հետ, Մովսէսէն յետոյ, երբ Քրիստոս, որպէս իսկական Գառնուկը պիտի գար գոհուելու:

«Անոր արիւնէն առնեն ու փուններուն երկու կողմի դրանդիքներուն ու վերի սեմին վրայ քսեն» (7 հմր): Ուրեղէ առաջ արարողութիւն մըն է որ պէտք է կատարէին, անոր արիւնը քսելու որպէս նշան: Այս երեւոյթը որպէս նախապարաստութիւն գալիք ճշմարիտին, որ այս անգամ ոչ թէ գառնուկին արիւնը, այլ նոյնինքն Յիսուս Քրիստոսի արիւնը մեր վրայ առնելու որպէս նշան, որպէսզի փրկուինք գալիք հարուածէն՝ Աստուծոյ դատաստանէն, պայմանաւ որ մեր հաւատարմութիւնը պահենք (հմմտ 1 Պետրոս 1:19): Հեղափոխականօրէն, Աստուած փարքերութիւն չորաւ բարեպաշտ եւ ոչ բարեպաշտ հրեայի միջեւ, այլ անոնք որոնք քսեցին այդ արիւնէն փրկուեցան: Սա ցոյց կու տայ Աստուծոյ շնորհքի դռները լայն բացած ըլլալը, որպէսզի բոլոր անոնք որոնք իրենք կ'ապաւինին փրկուին: Բայց օրէնքի փոշուրէնէն ետք պայման դրաւ որ գարկական գօհը ճաշակողները մաքուր ըլլան: Այս յաւելեալ պայմանը սիրոյ պայմանն է: Աստուած խիստ դատաւոր մը չէ որ օրէնքի գործադրութեան խիստ չափանիշով մեզ չափէ, բայց ինչպէս Աստուծոյ սէրը մեր հանդէպ, նոյնպէս նաեւ մեր սէրը Աստուծոյ հանդէպ, եւ այդ սէրը մեզ մղելու նմանելու իրեն եւ այդ արեան արժանաւորութեան մէջ մնալու, որպէսզի այդ արիւնը մեզ գերծ պահէ դատապարտութենէն:

«Միսը նոյն գիշերը ուրեն: Զանիկա կրակին վրայ խորոված, բաղաջրով ու լեղի խոտով» (8 հմր): Որովհետեւ խաշելը կրնայ ժամանակ խել, նաեւ կաթսայի մէջ գեղեղելու համար կտոր-կտոր ընելու պարագան, բան մը որ յերագային պիտի արգիլուէր: Այս բոլորը դարձեալ որպէս նախապարաստութիւն գալիքին, որ այս անգամ Յիսուս Քրիստոսի ոչ մէկ ոսկորը պիտի կտորէին (հմմտ 34:20 եւ Յովի 19:36): Իսկ Յիսուսի ոսկորները չկտորելուն կը խորհրդանշէ Քրիստոսի ամբողջական մարմինը, այս պարագային նաեւ Եկեղեցոյ ամբողջականութիւնը, որուն գլուխը Քրիստոս Ինքն է, հակառակ այն իրողութեան, որ Անոր մարմինը խոցուողուցաւ գամով եւ գեղարդով ու գանազան հարուածներով, բայց մնաց մէկ, եւ այդ մէկը որպէս պարկերացում հեղափոխ Եկեղեցոյ կեանքին, որ հակառակ փեղի ունեցող վերիվայրումներուն, մանր եւ մեծ շեղումներուն, Քրիստոսի Եկեղեցին կը մնայ մէկ իր դաւանանքին ու հաւատքին մէջ, ընդունելով գճրիստոս որպէս Տէր եւ Աստուած:

Բաղարջով ուրել: Բաղարջ կը նշանակէ որուն մէջ թթխմոր չկայ: Ընդհանրապէս Աստուածաշունչին մէջ թթխմորը նկատուած է որպէս անմաքրութեան նշան, որուն համար ալ Քրիստոս կը զգուշացնէր իր աշակերտները Փարիսեցիներու թթխմորէն (Մատթէոս 16:6): Միւս կողմէ, նաեւ յեփազային Քրիստոսի մարմինը պիտի ըլլար այդպիսին որպէս անապակ առանց մեղքի (Ա Կորնթ 5:7-8):

Իսկ լեղի խոտրի պարագային, Աստուած կ'ուզէ որ իր ժողովուրդը սերունդէ-սերունդ այդ լեղի խոտրը ճաշակէ, որպէսզի իբրեւ յիշատակ յիշեն իրենց դառն վիճակը որ ունեցան Եգիպտոսի գերութեան շրջանին, եւ թէ ինչպէս Աստուած զիրենք ազատագրեց այդ դառնութենէն: Միւս կողմէ, նաեւ այդ լեղի խոտրը, խորհրդանիշ որպէս բուժման: Այնպէս ինչպէս դեղը լեղի ու դառն է, բայց բուժիչ: Ահաւասիկ յիշեցնելու եւ իրենց դառնութիւնը եւ իրենց բժշկութիւնը:

**«Այսպէս պիտի ուրելք. ձեր գօփիները մէջքերնիդ ու ձեր կօիկները ոտքերնիդ եւ ձեր ցուպերը ձեռքերնիդ ըլլալով՝ զանիկա արտորանօք ուրելք»** (11 հմր): Այսինքն ոտքի ճամբորդութեան պատրաստ, որովհետեւ անմիջապէս ճամբայ պիտի ելլէին Եգիպտոսէն դուրս գալու: Հեփաքրքրական համեմատութիւն մըն է Պօղոս Առաքեալի Եփեսացիներուն գրած նամակին 6:15, Աստուծոյ սպառազինութիւնը վրայ առնելու:

**«Տիրոջ զատիկն է»** (12 հմր), որ կը նշանակէ անցնիլ, Տիրոջ հրեշտակը պիտի անցնի: Նաեւ կը նշանակէ զատուիլ, որպէս Եգիպտոսէն ելքը:

**«Եգիպտոսի բոլոր աստուածներուն վրայ դափաստան պիտի ընեն»** (12 հմր): Այս բոլոր եղածները հետեւաբար դափաստան մըն է Եգիպտոսի աստուածներուն վրայ, ցոյց տալու Աստուծոյ ամենակարող ըլլալը, ու անոնց ոչնչութիւնը: Եւ այս դափաստանը նաեւ չարին դէմ, որ ուզեց ինքզինք աստուածացնել: